ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Մ. ՄԱՆՐԻԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մանրիկյան.

Ի պատասխան Ձեր 26.02.2019թ. հ.01/51Մ գրության՝ տեղեկացվում է.

Մոլդովական փողոցի հ.29/2 շենքի հ.202 բնակարանը նախկինում պատկանել է քաղաքացի Նինա Առուստամովային, որի մահից հետո բնակարանը համարվել է անժառանգ գույք և օրենքի ուժով դրա նկատմամբ գրանցվել է Երևան համայնքի սեփականության իրավունքը: Քննարկվող բնակարանը սեփականատիրոջ մահից հետո ապօրինի զբաղեցվել է քաղաքացի Գրիգորի Գևորգյանի կողմից: Երևանի քաղաքապետարանի կողմից միջնորդություն է ներկայացվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչություն՝ ՀՀ կառավարության 10.05.2007թ. հ.797-Ն որոշման հիման վրա բնակարանն ազատելու համար: Տեղեկացվում է նաև, որ Մոլդովական փողոցի հ.29/2 շենքի հ.202 բնակարանի տնօրինման և օգտագործման մասով առկա է վեճ: Մասնավորապես՝ Երևանի քաղաքապետարան, ինչպես նաև տարբեր մարմիններ քաղաքացիներ՝ Լիլիյա Ավակյանի, Կարինե Դաշտոյանի, Ջուլիետա Ղազարյանի կողմից ստացվում են բազմաթիվ դիմումներ՝ յուրաքանչյուրը քննարկվող բնակարանն իրեն տրադրելու խնդրանքով: Տեղեկացվում է, որ համայնքի սեփականություն հանդիսացող տարածքների տրամադրումը կարող է իրականացվել Երևան քաղաքի ավագանու 25.12.2018թ. հ.41-Ն որոշմամբ սահմանված կարգով, որով բնակարանային պայմանների բարելավման նպատակով բնակարանների տրամադրման գործառույթ նախատեսված չէ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ